

ՆԵՐԿԵԳՈՐԺՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆԱԽԹԱՐԳԻՒՆՆԵՐՆԵՐԻԹԻՒՆԸ ՃԱՊՈ- ՆԻՆՅՈՒՄ

Ճապոնիան միշտ առաւելապէս հողագործական երկիր է եղել, և դեռ այժմ էլ նրա բնակիչների կիսից աւելին ապրում է գիւղերում: Նրկրի ամբողջ արդիւնքի մի երրորդ մասը հողագործութիւնից է ստացւում:

Պէտք է նկատել, որ Ճապոնիայի բնական պայմաններն ընդհանրապէս անբարեյաջող են հողագործութեան համար, և այդ երկրում հողագործութեան զարգացումը բացատրւում է ազգաբնակչութեան զարմանալի ժրջանութեամբ: 1868 թուի յեղափոխութեան ժամանակից միջոցներ ձեռք առնուեցին ճահիճները ցամաքեցնելու և դաշտերը հեղեղուելուց ազատ պահելու դէմ կային:

Ներկայումս միայն միջանի կղզիներում, ինչպէս՝ Նիպոն, Կիու-Սիու, կուլ-տուրան հասել է ծայր սահմանին, մինչդեռ միւս կղզիների վրայ արդիւնքի բազմաթիւ դեռ չշահագործուող աղբիւրներ կան: Արտաքին վաճառականութեան զարգացման հետ միասին երկրի արդիւնաբերութիւնն աւելի ու աւելի բազմազան է դառնում: Քիչ արգաւանդ հողերում բրինձ ցանելուն այժմ վերջ են տուել և աւելի շահաւէտ են գտել պտղատու ծառեր տնկել, մանաւանդ խնձորենիներ ու նարնջենիներ: Ճապոնիայի համար արդէն անցել են այն ժամանակները, երբ պտղատու ծառերը տնկւում էին միայն նրանց ծաղիկների համար. այժմ պտուղները մեծ քանակութեամբ վաճառի են հանւում Ռուսաստանի և Հիւսիսային-Ամերիկայի շուկաներում և կազմում են ժողովրդական արդիւնքի նշանաւոր մասը: Բամբակագործութիւնն զգալիօրէն սահմանափակուել է որպէս քիչ շահաւէտ բան, բայց մետաքսագործութիւնն աճել է $\frac{1}{3}$ -ով:

Մինչև վերջին ժամանակներս Ճապոնիայում անյայտ էր անասնապահութիւնը. ճապոնական երկրագործն իր անտեսութիւնը վարում էր բացառապէս ձեռքի աշխատանքով: Ներկա-

յուսմ աւելի յաճախ է գործադրուում կենդանիների աշխատանքը. ձիարուծութիւնն արագօրէն զարգանում է զօրքի պահանջներին բաւականութիւն տալու համար: Եթէ առաջ ժողովրդի գլխաւոր կերակուրը բրինձն ու ձուկն էին, այժմ ճապոնացիները սիրով են ուտում միս, ուստի և լաւ կերակրելով չաղացնում են խոզերին:

Ճապոնացիների գիւղատնտեսական գործիքները յիշեցնում են նախնական ժողովուրդներին: Ամենից յաճախ գործ է ածուում բահ, ամենից սակաւ արօր: Ճապոնիայի գիւղատնտեսութիւնն ընդհանրապէս աւելի շուտով այգեգործութիւն կարելի է անուանել, որովհետեւ պահանջում է չափազանց քրտնաթոր աշխատանք, շատ անգամ էլ բաւականաչափ ծանօթութիւններ: Այսպէս օրինակ՝ լեռների փեշերին ոռոգման դաշտեր շինելը երբեմն շատ բարդ է լինում: Հացահատիկների ուրիշ երկրներից ներկայումս լայն ծաւալ ստացած ներմուծութիւնն իջեցրել է հացահատիկների գինը, և երկրագործն աւելի ու աւելի քիչ հնարաւորութիւն է ստանում տնտեսութիւնը վարելու առանց մեքենական աշխատանքի: Սակայն և այնպէս նորմուծութիւններին նշանաւոր խոչընդոտ է հանդիսանում չափազանց մանր հողաբաժինների մեծ քանակութիւնը: Դա բացատրուում է նրանով, որ մինչև 1873 թ. ամբողջ հողը համարուում էր կայսրի սեփականութիւն և ոչոք չէր կարող իր համար հող վերցնել: Թէև այժմ հողը համարուում է մասնաւոր սեփականութիւն և կարելի է բաժին վերցնել, բայց և այնպէս մինչև անգամ հողատէրերը, որոնք իրանց ձեռքն են ժողովիլ աւելի նշանաւոր հողամասերը, իրանք իրանցից զիւղատնտեսութեամբ չեն զբաղւում, այլ իրանց հողերը միջանի մանր ֆիրմաների են տալիս:

Ճապոնիայում այժմ արդէն գոյութիւն ունին սինդիկատներ, որոնք երկու տեսակի են լինում. առևտրական և արդիւնագործական: Առևտրական սինդիկատները հոգում են թէյ ու մետաքս արդիւնաբերելու մասին, այլև ներկայանում են իւրեւ միջնորդներ երկրագործի ու գործարանատիրոջ միջև: Արդիւնագործական սինդիկատները երկրագործներին զիւղատնտեսական գործիքներ են տալիս և հողը պարարտացնում («Rohiki Nodowa»):

Ճապոնիայի շուկաներում բացի օտարամուտ կերոսինից՝ պատահում է և՛ շատ տեղական, ճապոնական նաւթից ստացուած:

Ճապոնական պետական լեռնային վարչութեան տեղեկութիւնների հիման վրայ՝ նաւթի բնական արտահոսումը և այրուող գազերը վաղ ժամանակներից արդէն յայտնի են Ճապո-

նիայի շատ նահանգներում, ուր նրանք պատահում են միշտ
երրակի ձևափոխութեան մէջ: Նաւթաբեր ամենահարուստ հո-
ղերն ու հանքերը գտնւում են Իչիգո նահանգում, Նիպպոն
կղզու վրայ, հիւսիսային լայնութեան 36 ու 38 և արևելեան
երկարութեան 138 ու 140 աստիճանների մէջ: Նաւթային հան-
քածոներ գտնւում են նաև՝ Տոտոմի, Ուգո և Շինանո նա-
հանգներում, այլև նոյն երկրաչափական դիրքում Սոկայդո կամ
Եգո կղզիների վրայ, բայց նրանք սակաւարդիւն են և տալիս
են հանքաիւղի մի աննշան քանակութիւն:

1895 թուից մինչև 1900-ը Ճապոնիայի բոլոր հանքածու-
ներից ստացուած նաւթի ընդհանուր քանակը 7,444,832 պուդ է:

Իսկ Իօկահամայի Chamber of Commerce-ի և նոյնտեղի
նաւթավաճառների տեղեկութիւնների հիման վրայ՝ ճապոնական
նաւթից ստացուած կերոսինի քանակը հաւասարւում էր 1898
թուին 600 հազար արկղի, իսկ 1900-ին մէկուկէս միլլիօնի:
Նոյն տեղեկութիւնների հիման վրայ՝ նախապեջին երկու տա-
րիներում ճապոնական կերոսինի արդիւնաբերութիւնը մեծա-
ցել է աննշան չափով, այն է՝ 1902 թուին հաշւում էին 18 միլ-
լիօն ամերիկական դալլոն *), կամ 1,800,000 արկղ:

Ճապոնիայում—ինչպէս այդ լինում է ամենմի տեղ, ուր
որ նաւթ է պատահում—սկզբում նաւթն ստացւում էր պրի-
միտիւ ձևով, այսինքն ոչ խոր փոսերով: 1890 թուին այնտեղ
կազմակերպուեցին միքանի նաւթագործական ընկերութիւններ՝
ըստ տեղեկութիւնների ստատիստիկական բւերօի՝ 2½ միլլիօն
իենից աւելի ընդհանուր դրամապլսով Այդ բոլոր ընկերու-
թիւնները ձեռք զարկեցին նաւթի կանոնաւոր շահագործման և
ձեռնարկեցին մեքենական փորուածքի նախ կանադեան ձևով
և ապա ամերիկական: 1899 թուին տեղական այդ նաւթագոր-
ծական ընկերութիւններն ընդամենը 50 էին՝ 2,8 միլլիօն իեն
ընդհանուր դրամապլսով:

Մօտաւորապէս հէնց այդ ժամանակից տեղական նաւ-
թագործական ընկերութիւնների մեծամասնութիւնը և մի-
քանի օտարերկրացի ֆիրմաներ, ինչպէս՝ Samuel, Samuel
& Co., Sfindard Oil Co և միւսները կազմեցին մի
մեծ ակցիօներական ընկերութիւն International Oil Co ա-
նունով և դուրս թողեցին 1,200,000 ակցիա, մօտաւո-
րապէս 11 միլլիօն իենի արժողութեամբ: Տեղական նաւ-
թագործներից շատերն այդ ընկերութեան ակցիօներնե-
րաւան իրանց հանքածոներով և նաւթաբեր հողերով, իսկ

*) Դալլոն=մօտ 9 պուդի:

օտարերկրացիներն իրանց դրամագլուխներով: Այդպիսով կազմակերպուած ընկերութիւնն շտապով ձեռնարկեց հանքածուների շահագործումին լայն չափերով և միանգամից բազմաթիւ փորուածքներ արաւ զանազան նահանգների նաւթաբեր հողերում, որոնք պատկանում էին ընկերութեանը: Սակայն ակցիոներները շուտով հիասթափուեցին, որովհետեւ երեւաց, որ նրանց յոյսերը սաստիկ չափազանցցրած են եղել և ճապոնական նաւթահանքերը ոչ այնքան արդիւնաւէտ դուրս եկան: Ակցիոներներին շատերն աճապարեցին ծախձիւն իրանց ակցիաները, որոնց մեծ մասը գնեց ամերիկական Standard-ը: Այդպիսով այս վերջինն այժմ ներկայանում է իբրեւ գլխաւոր կարգադրիչ և համարեան սեփականատէր ճապոնական նաւթահանքերի մեծ մասի:

Իսկապէս ունենալով, որ այդ հանքածուներն արդէն երեք տարի շահագործման մէջ լինելով դրամագլուխներով զօրեղ և նաւթային գործում փորձերով հարուստ այնպիսի մի ընկերութեան ձեռքում, ինչպիսին ամերիկական Standard-ն է, բոլորովին չեն մեծացրել իրանց արդիւնաբերութիւնը, — շատերը համոզուեցին, որ ճապոնական նաւթահանքերը քիչ արդիւնաւէտ են և րացարձակ վտանգ չեն ներկայացնում օտարաժուտ կերոսինի ներմուծման համար:

Իօկահամայի և Չինաստանի կերոսինավաճառների տեղեկութիւնների համաձայն՝ ճապոնական նաւթից ստացած կերոսինը վատ յատկութիւն ունի և առաւելութեամբ բաւականաչափ ստոր է օտարաժուտ կերոսինից, ուստի և նրա գինն անհամեմատ էժան է:

Ճապոնական կերոսինը մեծաւ մասամբ սպառոււմ է հէնց իր տեղում, թէև նա յաճախ պատահում է և՛ Տոկիոյում ու Իօկահամայում:

Փոքրիկ Ճապոնիան, որի շուկան է մտել և ծախուել 1902 թուին 94 միլիոն գալլոնից աւելի կերոսին, որոնցից 76 միլիոն ներմուծուած և մօտ 18 միլիոն տեղական է եղել, — կարող է համարուել կերոսինի գրանդիօզ և փայլուն շուկայ: Հասարակական պատրաստ ու էժան շտեմարանները և ոչ թանգ քրէհները, նաեւ ապրանքի լաւ ծախուելը շատ են նըպաստում այն բանին, որ Ճապոնիան համարուի կերոսինի մի այդպիսի գրանդիօզ և փայլուն շուկայ: *)

*) Միջանի յապաւումներով թարգմանուած է «Материалы къ изученію современныхъ условій сбыта и потребленія нефтяныхъ продуктовъ» գրքի IV պրակից: